«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

«NEW GENERATION» HUMANITARIAN NGO

# ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

**# 17 ՀՈՒՆԻՍ 2016**

Սույն ամսագիրը լույս է տեսնում յուրաքանչյուր ամիս, որն արտացոլում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

Հայաստան 0019, ք.Երևան, Բաղրամյան 49, բն. 7
Apt.7, 49 Baghramyan str. Yerevan 0019, Armenia
+374 60 378989
+374 60 478989
newgenerationngngo@gmail.com
http://ngngo.net/

# «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԴԱՍԸՆԹԱՑ» ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում 2016 թ.-ի հունիսին Իջևանում կազմակերպել է «Մարդու իրավունքներ, հանդուրժողականություն և խտրականության արգելք» թեմայով դասընթաց, որին մասնակցել են ներկայացուցիչներ Տավուշի մարզպետարանից, Իջևանի զբաղվածության տարածքային կենտրոնից, Քաղաքացիական երիտասարդական կենտրոնից, թիվ 5 հիմնական դպրոցից, վարժարանից, «Հույսի կամուրջ» հկ-ից և ուսանողներ Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջից, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Իջևանի մասնաճյուղից, Եվրասիա միջազգային համալսարանի Իջևանի խորհրդատվական կենտրոնից:

Մասնակիցները մեծ ոգևորությամբ են մասնակցել դասընթացին, քանի որ, ինչպես իրենք են նշել, թեմաները ուսուցողական են, արդիական և միանշանակորեն նպաստում են իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Նրանք նաև առաջարկել են, որ նմանատիպ դասընթացները հաճախակի կազմակերպվեն ոչ միայն Իջևանում, այլ նաև մարզի մյուս քաղաքներում, և անդրադարձ կատարվի այնպիսի թեմաների, ինչպիսիք են գենդերային հարցերը, կանանց նկատմամբ բռնությունը, սեռական փոքրամասնությունների իրավունքները: «Եթե այս ստացած օրենքներով շարժվենք, ամեն ինչ կլինի արդար և գեղեցիկ: Թող որ ամեն ինչ գործի օրենքով»,- դասընթացի գնահատման թերթիկի վրա գրել է մասնակիցներից մեկը:

Դասընթացավարներ Արթուր Մակարյանը և Արայիկ Ձայլանը ներկայացրել են «Մարդու իրավունքներ», «Խտրականության արգելք», «Խոսքի և տեղեկատվության ազատություն» և «Ատելության խոսք» թեմաները:

Ստացած տեսական գիտելիքների հիման վրա մասնակիցները նախ «Իրավունքի շնորհում» ինտերակտիվ խաղի միջոցով միմյանց իրավունքներ են շնորհել, ինչն օգնել է հիմնովին անդրադառնալ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին» և «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային»: Այնուհետև խմբերով քննարկել են մարդու իրավունքների խախտման դեպքերին առնչվող իրավիճակային խնդիր և պետություն ու դիմումատու կողմերի բաժանվելով փորձել են ինքնուրույն պարզել, թե արդյոք դիմողի նկատմամբ առկա է եղել խտրական վերաբերմունք, և ինչպես է այն լուծվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Նաև սովորել են հայցադիմում կազմելու և դրա դեմ պատասխան ներկայացնելու: Ինչպես նաև տեղեկատվության մասին հարցում կազմելու հմտությունները, իրավիճակին խնդիրների հիման վրա կազմակերպել են դատախաղ և ներկայացնելով դատարան, բողոքաբեր և պատասխանող կողմերը՝պարզել և հիմնավորել են, թե առաջադրված խնդիրներում արդյոք առկա են ազատ խոսքը սահմանափակելու հիմքեր: Ավարտին մասնակիցներին շնորհվել են մասնակցության վկայականներ

# «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը 2016 թվականի հունիսի 21-23-ը, մասնակցել է Կիևում կազմակերպված «Բյուջետային ջատագովություն և համարժեք ներդրումային գնահատման, գերակայությունների կանխարգելման ծրագրերի վերաբերյալ Միավ վարակի հետ կապված ախտորոշում, բուժում և խնամք» թեմայով աշխատանքային հանդիպմանը: Հանդիպումն իրականացվում է Եվրասիական վնասի նվազեցման ցանցի տարածաշրջանային երկու ծրագրով.

1. «Համագործակցություն Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում հանուն ՄԻԱՎ վարակին առնչվող ծառայությունների հավասար հասանելիության», որն իրականացվում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց միության, Եվրասիական վնասի նվազեցման ցանցի համագործակցությամբ, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նոր մոդելի շրջանակներում:
2. «Առողջությունը կարելի է գնել փողով, եթե այն ներառում է միջոցներ» Եվրոպական վնասի նվազեցման ցանցի գլխավորությամբ» և Ռոբերտ Կարրի կողմից հովանավորվող ֆոնդով՝ քաղաքացիների համախմբման ցանցի աջակցությամբ: Ծրագիրն իրականացվում է երեք կազմակերպություններով.

- Եվրասիական վնասի նվազեցման ցանց
- Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ – ով ապրող մարդկանց միություն
- Տղամարդկանց առողջության Եվրասիական կոալիցիա

Աշխատանքային հանդիպման նպատակն է՝ մասնակիցներին ծանոթացնել տարածաշրջանային ծրագրերի նպատակների և խնդիրների հետ, համաձայնեցնել կանխման, ախտորոշման, ՄԻԱՎ-վարակի բուժման և խնամքի ծառայությունների բյուջեի հավաքագրման և վերլուծման հետագա աշխատանքները, ինչպես նաև ՄԻԱՎ-ի հետ կապված ֆինանսավորման ծառայությունների գործընթացների համատեղ աշխատանքի նախաձեռնման և կազմակերպման համար համագործակցության խմբի ձևավորում:

Աշխատանքային հանդիպման երեկվա և այսօրվա ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ Եվրասիական վնասի նվազեցման բյուջեի մոդելի պաշտպանություն, Ինչպիսի փաստարկներ են պետք բյուջեի արդյունավետության համար, փաստերի հավաքագրում և սպեցիֆիկ խնդիրների հետազոտություններ երկրներում և այլն: Նախատեսվում է նաև քննարկել՝ դրամաշնորհային կառավարում, ժամկետներ, անձնակազմ, գնումներ, հաշվետվություններ, առաջին տարվա աշխատանքային պլանի կառուցվածք, սպասվող արդյունքները և ծրագրային հաշվետվություն: Այնուհետև նախատեսվում է արդյունքների քննարկում:

Հանդիպմանը մասնակցում է նաև կազմակերպության գործընկեր «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչ Արա Մելքումյանը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» ՀԿ-երը 2016թ.-ի հուլիս ամսից մեկնարկելու են «Առողջությունը հնարավոր է գնել, եթե առկա են ռեսուրսներ» ծրագրի տեղական գործողությունները, որոնց մասին առավել մանրամասն տեղեկատվությունը կհրապարակվի շուտով:

## «ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցներ Արթուր Մակարյանը և Նարե Հովհաննիսյանը 2016 թ.-ի հունիսի 22-23-ը մասնակցել են «Ներքին կառավարում և ղեկավարում» թեմայով երկօրյա դասընթացին, որը իրականացրել է «Բիզնեսի աջակցման կենտրոն»-ը «Առողջապահություն, ֆինանսներ և կառավարում» ծրագրի շրջանակներում: Դասընթացի նպատակն էր ծրագրում ընդգրկված ՀԿ-ներին օժանդակություն ցուցաբերել և գիտելիքներ հաղորդել անձնակազմի և կազմակերպության ներքին կառավարման վերաբերյալ:

Երկու օրերի ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ ՀԿ կառավարում, ռազմավարական կառավարում և մշակում, ռազմավարական գործընթաց, ՀԿ-ների SWOT, PESTLE և Field Force վերլուծություններ, անձնակազմի կառավարում, հարցազրույցի դերը, աշխատանքի արդյունավետ կազմակերպում, աշխատանքի կատարողականի չափում, աշխատանքային ձեռնարկի մշակում և բովանդակություն:

## «ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ 2016» ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հայտարարում է ԼԳԲՏԻ անձանց հարցերին առնչվող **«ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ-2016»** ամենամյա լրատվական մրցույթ: Նպատակը՝ միավորել ՁԼՄ-ների ներկայացուցիչների ներուժը ԼԳԲՏԻ անձանց հիմնախնդիրների լուսաբանման շուրջ և խրախուսել ոլորտի հիմնահարցերը բարձրաձայնող լրագրողներին:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի և մարզերի լրատվամիջոցների ներկայացուցիչներն ու անկախ լրագրողները:

Մրցույթի մասնակցության չափանիշներն են.

- ✓ Անհրաժեշտ է ներկայացնել 2016 թվականի հունվարից 1-ից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ԼԳԲՏԻ թեմաներով պատրաստած հեռուստահաղորդումներ, ռադիոհաղորդումներ, մամուլի հրապարակումներ և ինտերնետային պարբերականներում ներկայացված լրագրողական նյութեր,
- ✓ Նյութերում պետք է պահպանված լինեն լրագրողական էթիկան և հեղինակային մոտեցումը,
- ✓ Նյութի բովանդակությունը պետք է լինի հանրությանը մատչելի
- ✓ Ընտրված թեման պետք է լինի սպառիչ և հարցի շուրջ պարունակի համակողմանի տեղեկատվություն
- ✓ Նյութերը պարտադիր պետք է լինեն հայերեն (անգլերեն տարբերակը՝ ըստ ցանկության):

Ոլորտի մասնագետներից և լրագրող-փորձագետներից կազմված ժյուրին կընտրի մրցանակակիրներին, որոնք կպարգևատրվեն դրամական մրցանակներով:

**Մրցույթի հաղթողը կստանա դրամական պարգև՝ 100,000 / մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:**

Ժյուրիի համակրանքին արժանացած ևս 2 նյութ կարժանանան խրախուսական մրցանակների:

Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել դիմում հայտ, որը կարող եք ներբեռնել ngngo.net կայքից:

# ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ «ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ 6 ԱՄԻՍՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

2016 թվականի հունիս 28-ին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը «Մեդիա կենտրոն»-ում մամուլի ասուլիս էր հրավիրել «Ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում. 2016 թվականի առաջին 6 ամիսների ամփոփում» թեմայով:

Մամուլի ասուլիսին մասնակցել են ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական Խմբի նախագահ Արայիկ Զալյանը, դիտորդներ Ռոբերտ Ռևազյանը, Ռուբեն Սարգսյանը, Սերգեյ Գաբրիելյան և Արա Ղարագյոզյանը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանն անդրադարձել է մասնավորապես ՔԿՀ-երում առկա և շարունակվող խտրական մոտեցումներին և առավել խոցելի խմբերի պահման պայմաններին: «Խոցելի խմբերը քրեական օրենքներին և գողական օրենքներին չենթարկվող խմբերն են, առողջական խնդիրներ ունեցող անձինք, նույնասեռականները, թմրամիջոցներ օգտագործողները կամ կամ մեթադոնային բուժում ստացող անձինք, որոնք առավել հաճախ են ենթարկվում խտրականության»,-նշել է Ս. Գաբրիելյանը: Խումբն ունի հստակ միջոցներ, առաջարկություններ պատկան մարմիններին, բայց Արդարադատության նախարարության և այլ մարմինների կողմից իրականացվող փոփոխություններն այնքան չնչին են, որ չեն բերում նշված խմբի անձանց խնդիրների լուծմանը ՔԿՀ-ներում: «Կարելի է նաև արձանագրել, որ որոշ հարցերի լուծում իր մեջ ներառում է խտրական վերաբերմունք խոցելի խմբերի նկատմամբ: Եթե անձը նույնասեռական է, ներարկային թմրամիջոց օգտագործող է, հաշմանդամություն ունի, ապա նրանց խնդիրն այնքան էլ կարևոր չէ: Եվ այս խմբերի նկատմամբ խտրականությունը ավելի ծայրահեղ ձևով է արտահայտվում ՔԿՀ-ներում:»

Ներկայացվել է նաև նշված ժամանակահատվածում Դիտորդական խմբի կատարած այցելությունների ամփոփ տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ խումբը կատարել է 57 այցելություն, որի ընթացքում աշխատել է 88 դատապարտված կամ կալանավորված անձանց հետ: Այցելությունները հիմնականում կատարվել են ահազանգերի և հրապարակումների հիման վրա: Այցելությունների 57 տոկոսը կատարվել է Նուբարաշեն Քրեակատարողական հիմնարկ, Արմավիր, Աբովյան, Վարդաշեն, Կոշ և Սևան ՔԿՀ-ներ և Դատապարտյալների հիվանդանոց: Հիմնական խնդիրներն առնչվել են բուժսպասարկմանը, քրեական գործի ընթացքին, վաղաժամկետ որոշումներին, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերին, հացադուլներին և սննդի հետ կապված խնդիրներին, որոնց մի մասը լուծում ստացել է, իսկ մյուս մասի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է:

Հրաչյա Գևորգյանի գործին, այնուհետև բուժսպասարկման հասանելիությանը և որակին անդրադառնալով՝ Արայիկ Զալյանը նշել է, քրեակատարողական հիմնարկներում համակարգային որևէ խնդիր չի լուծվել, ինչը հնարավոր կլինի միայն քաղաքական կամքի առկայության պարագայում:
Արա Ղարագյոզյանը ներկայացրել է հունիսի 12-ին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում տեղի ունեցած միջադեպը և ՔԿՀ աշխատակիցների կողմից կիրառված հատուկ միջոցները, իսկ ՔԿհ-ների ոչ կանոնադրական և հիերարխիկ հարաբերությունների մասին խոսել է Ռոբերտ Ռևազյանը:
Ասուլիսի ավարտին Գաբրիելյանը նշել է, որ քրեական օրենքների առկայությունը խոչընդոտում է Դիտորդական խմբի աշխատանքներին նաև կալանավորվածների կողմից առկա հիմնախնդիրների մասին բարձրաձայնելու տեսանկյունից, քանի որ կա վախի մթնոլորտ: Արդյունքում Դիտորդական խումբը բազում պատնեշների է հանդիպում, սակայն պայքարն ավելի արդյունավետ կլինի, եթե այն լինի երկկողմանի՝ Դիտորդական խմբի և կալանավորների ու դատապարտյալների համագործակցությամբ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ «Խտրականության արգելք և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կիրառում»» ԹԵՄԱՅՈՎ

2016 թվականի մայիսի 1-ից իրականացվում է «Առավել շատ տեղեկատվություն, առավել քիչ խտրականություն. ՔՀԿ-ների և խոցելի խմբերի կարողությունների զարգացում և հզորացում» ծրագիրը: Որը ֆինանսավորվում է Բաց Հասարակություն Հիմնադրամներ - Հայաստան ֆոնդերի կողմից: Ծրագրի նպատակն է խտրականության ենթակա խմբերի տեսանելիությունը մեծացնել և բերել նրանց առաջնագիծ: Այս ընթացքում ստեղծվել են աշխատանքային խմբեր և կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ հետևյալ հասարակական կազմակերպությունների հետ:

- «Ունիսոն» ՀԿ-ի կողմից
- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից
- «Ագաթ» ՀԿ-ի կողմից
- «Համագործակցություն հանուն ժողովրդավարության»ՀԿ-ի կողմից
- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի կողմից
- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից

Հուլիս ամսվա ընթացքում նախատեսվում է ապահով տարածքների ստեղծման միջազգային փորձի ուսումնասիրություն: Ենթադրամաշնորհների տրամադրում շահառու խմբերին: Հաղորդակցության խմբի հետ մշակել և որդեգրել ապահով տարածքների չափանիշներ հայ քաղհասարակության համար:

Ծրագրի շրջանակներում արդեն իրականացվել են մի շարք միջոցառումներ, դրանցից է նաև հունիսի 10-ին Երևանում Աշխատանքային հանդիպում/վարժանքը, որի նպատակն էր զարգացնել հասարակության թիրախային խմբերի կարողություններն ու բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակը խտրականության,

վերջինիս դեմ պայքարի կարևորության ու հետևանքների մասին: Ինչպես նաև մասնակիցներին ծանոթացնել խտրականություն հասկացության հետ, նրա տեսակների, խտրականության դեմ եվրոպական օրենքի համատեքստի և հիմնական սկզբունքների հետ: Կարևոր նպատակ էր հանդիսանում աշխատանքային հանդիպում/վարժանքի ժամանակ նաև ՀՀ-ում խտրականության դեմ օրենքի ընդունման անհրաժեշտության հարցի քննարկումը: Աշխատանքային հանդիպում/վարժանքի ընթացքում մասնակիցները ծանոթացան «ՀՀ-ում խտրականության դեմ օրենքի ընդունման անհրաժեշտությունը», «Պետության օրինական պարտավորությունները խտրականության դեմ պայքարում» թեմային, «Խտրականության արգելքը՝ որպես մարդու իրավունքների հավասար պաշտպանության երաշխիք» և այլ թեմաներով:
Աշխատանքային հանդիպում/վարժանքի ընթացքում քննարկում եղավ մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի հոդվածների մասին:
Կազմակերպվեց նաև ինտերակտիվ խաղ՝ դատախաղ, որի նպատակն էր թեմայի շուրջ քննարկված հարցերը, բերված օրինակները, ինչպես նաև ստացված գիտելիքները՝ գործնականում կիրառել, և որի արդյունքում պարզ դարձավ մատուցված նյութի մատչելիությունը:

## ԴԱՍԸՆԹԱՑ «ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

2016 թ.-ի հունիսի 29-30-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցներ Արթուր Մակարյանը և Նարե Հովհաննիսյանը «Բիզնեսի աջակցման կենտրոն»-ի կողմից իրականացված «Շահերի պաշտպանություն» թեմայով դասընթացին, որը կազմակերպվել է «Առողջապահություն, ֆինանսներ և կառավարում» ծրագրի շրջանակներում:
Մասնակիցները նախ ծանոթացել են շահերի պաշտպանության սահմանումներին, շահերի պաշտպանության և այլ կոնցեպտների տարբերություններին: Այնուհետև խմբային աշխատանքների և քննարկումների միջոցով անդրադարձել են շահառու և թիրախ խմբերին, ՇՊ իրականացման մակարդակներին, իրագործման տարբեր ձևերին, տեսակներին, ռազմավարությանը, մարտավարությանը, նախագծմանը, գործողությունների պլանին:

## ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍՖՈԲԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆՁԵԿՈՒՅՑ




### ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ 2016 թ.-ի մայիսի 17-ին կազմակերպել էր «Օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ՝ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության համար» թեմայով կոնֆերանս, որի նպատակն էր հանրությանը ներկայացնել օրենսդրական այն փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանական մեխանիզմների ստեղծմանը և նրանց՝ հասարակության մեջ ինտեգրմանը:
Կոնֆերանսը կազմակերպվել էր Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դասպանատան

ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն գրություն է ուղարկել ՀՀ Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին, որում մասնավորապես ասվում է. «Մենք ունենք մտավախություն, որ Քրիստ Մանարյան օգտատիրոջ կողմից հնչեված հրապարակային սպառնալիքները և ատելության կոչերը կարող են վերածվել փաստացի իրական գործողությունների, այն է՝ ատելության և խտրականության հիմքով հանցագործությունների: Հարգարժան պ-ն Գասպարյան, խնդրում ենք հիմք ընդունել այս տեղեկատվությունը և տալ իրավական ընթացակարգ՝ ապահովելով թե՛ կազմակերպության և թե՛ վերջինիս աշխատակիցների անվտանգությունը, ինչպես նաև վերջիններիս ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների ազատ և անկաշկանդ իրականացումը»:

2016թ-ի մայիսի 30-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ՀՀ Ոստիկանության Շտաբի պետի տեղակալ պարոն Ա. Սարգսյանից ստացել է թիվ 2/3-2-1953 գրությունը, որտեղ նշված է.

. . . ՀՀ Ոստիկանության պետին հասցեագրված Ձեր դիմումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն՝ հետաքննությամբ հետագա ընթացքը որոշելու համար. . . :

## ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ ՆՈՐ ԱԼԻՔ

Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ մայիսի 17-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կազմակերպած «Օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ՝ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության համար» թեմայով կոնֆերանսից և այդ օրը այլ ՀԿ-ների կողմից նախաձեռնած միջոցառումներից հետո համացանցում ստեղծվել է ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության խոսք և թշնամանք տարածող կայք՝ http://stop-g7.com/, որում հրապարակված նյութերը մի քանի էջերով ու մի խումբ մարդկանց կողմից տարածվում են Facebook-ում: Կայքը երկլեզու է՝ հայերեն և ռուսերեն, և մինչ այժմ այնտեղ հրապարակվել են «Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը համասեռամոլություն է քարոզում», «Այլասերվածների և իրենց հովանավորների օպերացիան Հայաստանում»,«ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի դեսպանների մասնակցությունը այլասերվածների փակ հավաքին» և «Այլասերվածների պաշտպան Լարա Ահարոնյան, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի նախագահ» հոդվածները հայերեն և ռուսերեն թարգմանություններով, որոնք չեն մեկնաբանվել կայքում, բայց փոխարենը stop-g7.com կաքի և Համահայկական ծնողական կոմիտեի ֆեյսբուքյան էջերում ունեցել են ընդհանուր առմամբ մոտ 366 հավանում, 212 տարածում և 143 մեկնաբանություն:

«Հայոց աշխարը» մայիսի 28-ին հրապարակել է «Միայն ժողովրդի դիմադրությամբ հնարավոր կլինի կանխել այլասերումների օրինականացումը Հայաստանում» վերնագրով հարցազրույց «Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնության հիմնադիր անդամ Հայկ Այվազյանի հետ: Այն վերահրապարակվել է http://armsovereignty.com/ կայքում և տարածվել Հայահայկական ծնողական կոմիտեի էջում և ունեցել մոտ 32 հավանում, 3 տարածում և 2 մեկնաբանություն:
Ի պատասխան՝ LGBTnews.am կայքը հրապարակել է «Հոմոֆոբիայի կեղծ ալիք, կամ ինչու են աղմկում մարգինալները» վերնագրով հոդված, որտեղ հոդվածագիրը փորձել է մեկնաբանել վերոնշյալ հրապարակումների պատճառները:
**Ամբողջական զեկույցը կարող եք ներբեռնել *ngngo.net* կայքից**

## «ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՆԳԱՄ ՆՐԱՆՑ, ՈՒՄ ԹՎՈՒՄ Է, ԹԷ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՍԵՄԻՆԱՐ-ՎԱՐԺԱՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ

«...Վերաբերում է անգամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում»

2016 թվականի հունիսի 4-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունն իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքներ և ՄԻԱՎ» թեմաներով: Սեմինար-վարժանքը կրում էր «...Վերաբերում է անգամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում» խորագիրը:
Սեմինար նպատակն էր նպաստել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը 18-30 տարեկան երիտասարդների շրջանում՝ բարձրացնելով նրանց իրազեկվածության մակարդակը և բացահայտելով թեստավորման կարևորությունը ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների մասին: Ընթացքում մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ և ՁԻԱՀ տերմինների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերության, փոխանցման ուղիների և կենսական հեղուկների, պահպանակների ճիշտ օգտագործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորության մասին, այնուհետև ներկայացվեցին մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, մարդու իրավունքների զարգացման փուլերը, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ինչպես նաև անդրադարձ կատարվեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Սեմինար-վարժանքն իրականացվեց «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից: